

Ղ.յս 113 ամեան ծերոյս մայրն իրմէն
ինը տարի յառաջ գերեզման մտեր էր
122 տարուան :

Ամերիկացի լնտանիք մը :

Դանդեան գիշերն էր, գերմանացի
հին գաղթականներէն ընտանիք մը,
որոնք որդւոց որդի յաջորդելով, Իւն-
սիլվանիայի անտառներուն մէջ կը բը-
նակէին, նահապետական տան մը մէջ՝
վառարանի մը բոլորտիքը ժողուած,
թեթև ընթրէք մը կ'ընէին : Ուղա-
նին վրայ զրուած ձերմակ գինւոյ շիշերն
Հուենոսի գինեւէտ ափունքը կը յիշեցը-
նէին : Խրակարանին վերև հայիի փայ-
տէ պղտի շրջանակ մը՝ մէկդին տօ-
սախի ձիւղ մը, մէկալ դին որսի հրա-
ցան մը . շրջանակին մէջն ալ հաս-
տատուած էր մետաքսէ կապոյտ են-
թակայի մը վրայ խարտեաշ խոպոպի
փունջ մը : Ղ.յս ժամն գորովանաց և
յիշատակի ժամմ' էր Վրիստոսի ծը-
նունդը կ'երգէին, և մանուկ Հիսուսին
վրայ կը խօսակցէին . շատ վայելուչ
էին այս վայրկենիս այն խարտեաշ մա-
զերն : “ Ղոյնպէս ես ալ խարտեաշ
էի, ըսաւ ընտանեաց նահապետը . տե-
սէք այս գեղեցիկ խոպոպիքները, ա-
սոնցմով ատենօք այս ալւորեալ զլուխը
զարդարուած էր՝ ուր հիմա հաղիւ քա-
նի մը արծաթի թելեր կ'երևան : Հին
պատմութիւն մ' է ասիկայ, որ առանց
արցունքով ծնօտը թրծելու, չէր պատ-
մեր հայրս : Ո՞տիկ ըրէք որդեակը, կա-
րելի է որ չկարենամ ասկէ ետե երգել
ձեզի չետ Վրիստոսի ծնունդը, և այն
ատեն այս պատմութիւնս ձեր սիրտը
շարժէ :

“ Ըստ տարուան էի, մազերս ալ
խարտեաշ և երկայն, որսնք թէ քա-
միէ, թէ անձրեսի ատեն և թէ արեւու՝
միշտ հովուն կը ծածանէին : Հայրս որ
ամէն որ զիս հետը կը տանէր, որ մ'ալ

անտառը տարաւ փայտ կտրելու հա-
մար : Խոշոր կացին մը ունէր, որուն
ամէն մէկ հարուածովը ամէն կողմանէ
կայծեր կը յատքեցնէր : Խոնչպէս եղաւ
շեմգիտեր, ձիւղ մը ինկաւ ոտիցս քով
որուն վրայ թռչունի բոյն մը կար, հա-
զիւ ծռեցայ որ առնում, սահեցաւ
ոտքս, և զլուխս եկաւ մեծ կոճղին
վրայ՝ ուր հայրս ձիւղերը կը զարնէր.
և նոյն միջոցին հայրս կացինը բարձրա-
ցուցած ըլլալով, չկրցաւ մէկէն կեցնել.
ես ալ տառապանաց աղաղակ մ'էր ար-
ձակեցի, ուսկից հայրս խելքը կորսըն-
ցուցած գետինն ինկաւ : Ի՞այց շու-
տով զգաստացանք, ինքն իր վախէն
ես ալ գլխուս ցաւէն : Ո՞էկէն առաւ
զիս բազկացը մէջ և ոտուըներէս մինչեւ
գլուխս շօշափեց, կարծելով որ մեռած
եմ : Ի՞այց երբոր տեսաւ որ շրթանցս
մէջէն պղտիկ մը կը ժպտէի, և մար-
մնոյս վրայ և ոչ իսկ արեան կաթիլմը
կը տեսնուեր, ծնկան վրայ ընկաւ, և
արտասուաց կաթիլներով գոհութիւն
տուաւ Ղստուծոյ : Ո՞տք ելաւ և կրկին
անգամ կացինը ձեռք առնելու ժամա-
նակ, կոճեղ վրայ հոծ և երկայն խար-
տեաշ խոպոպիք մը դտաւ . առաւ զայն,
զիս ալ գրկեց, և խենթի պէս վազելով
մինչեւ խրձիթ բերաւ զիս, և մօրս ծըն-
կուըներուն վրայ հանգչեցուց : Ղհա-
ւասիկ որդեակը խոպոպիքներուն պատ-
մութիւնը, հայրս ուզեց որ միշտ վա-
ռարանին վրայ կենայ, որպէս զի բնաւ
չմունայ իր ընտանիքը՝ Ղստուծոյ նա-
խախնամութեան բարիքը :

